Հաստատված է
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ամբիոնի
« 28» 08. 20 17 թ.-ի նիստում :Արձ. թիվ 1)
Իրավագիտության ֆակուլտետի պետ՝
Մ.Մուրադյան
« »----------2017 **թ.**

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

/ Կազմվել է ուսումնական ծրագրի նախագծի հիման վրա /

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ		ՀՀ վարչական իրավունք
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ		
ՖԱԿՈՒԼՏԵՏ		Իրավագիտություն, անվճար ուսուցում
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ		Իրավագիտություն
ԱՄԲԻՈՆ ▪ **էլ հասցե**		Վարչական իրավունքի և ոստիկանության վարչական գործունեության ամբիոն E-mail. varchakan@mail.ru
ՀԵՂԻՆԱԿ		Վ.Ավագիմյան, ավագ դասախոս E-mail. vavagimyan56@gmail.com 093566111
ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ		2-րդ կուրս անվճար, 3-4 րդ կիսամյակ
ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ		բակալավր

ԿՐԵԴԻՏՆԵՐ		6 (**վեց**)
ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ		«Վարչական իրավունք» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է ընդամենը 180ժամ, լսարանային՝ 102 ժամ, որից 68 դասախոսություն, 26 սեմինար. 8 գործնական Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին սովորողը կատարում է գրականության ընթերցում և մշակում, վերլուծական, հետազոտական աշխատանք, դասախոսի հանձնարարությամբ կարող է գրել ռեֆերատներ և էսսեներ, պատրաստվում է հաջորդ դասին: Լսարանային դասերը կայանում են շաբաթը 6 լսարանային ժամ տևողությամբ: Դասընթացն ավարտվում է 3-րդ կիսամյակի վերջում ստուգարքի, 4-րդ

		կիսամյակի վերջում քննություն հանձնելով
ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ		Դասընթացը կառուցվում է ***,,Պետության և իրավունքի տեսության,,*** դասընթացի իմացության վրա:
ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ		«ՀՀ վարչական իրավունք » դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են պետական և սոցիալական կառավարման հասկացությունները, տեսակները, բնորոշ գծերը,սկզբունքները, պետական կառավարման գործոռույթները, փուլերը, վարչական իրավունքի հասկացությունը, առարկան, համակարգը, խնդիրները, սկզբունքները, վարչական իրավախախտման հասկացությունն ու տեսակները, իրավախախտման հասկացությունը, տարրերն ու հատկանիշները, վարչական պատասխանատվությունն ու դրա հիմքը, վարչական վարույթի և դատավարության փուլերն:
ՆՊԱՏԱԿ		Դասընթացի նպատակն է սովորողներին հաղորդել գիտելիքներ և ձևավորել կարողություններ վարչական իրավունքի հասկացության, առարկայի, համակարգի, խնդիրների, հասկացության, վարչաիրավական նորմերի հասկացության և տեսակների, գործնականում դրանց հրապարակման և կիրառման առանձնահատկությունների, վարչական իրավախախտման հասկացության, տարրերի և հատկանիշների, վարչական հարկադրանքի տեսակների և միջոցների, վարչական պատասխանատվության ու դրա հիմքի, վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարույթն ապահովելու միջոցների, և փուլերի վերաբերյալ:
ԽՆԴԻՐ/ՆԵՐ		Դասընթացի խնդիրներն են՝ 1. Ներկայացնել պետական կառավարման բնութագիրը, ձևերն ու մեթոդները, բնորոշ գծերը, պետական և սոցիալական կառավարման հասկացությունը , 2. Ուսումնասիրել հանրային իրավունքի համակարգում «Վարչական իրավունք» առարկայի էությունը և բովանդակությունը, վարչական իրավունքի նորմերն ու աղբույրները , 3. Սահմանել վարչաիրավական հարաբերությունների, դրանց նորմերի հասկացությունը կառուցվածքը, իրացման ձևերը , 4. ՈՒսումնասիրել վարչական վարույթի և վարչարարության հիմունքները , 5. Ներկայացնել վարչական պատասխանատվության բնութագրը,վարչական իրավախախտման և դրա իրավաբանական կազմը,

		6. Վեր հանել հանցագործությունների և վարչական իրավախախտումների սահմանազատման իրավական հիմքերն ու հատկանիշները, 7.Ուսումնասիրել վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի փուլերն ու առանձնահատկությունները:
ԿՈՌԻԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐՅՈՒՆՔԵՐ *1.* ***Կարողնա՝***		: ա) ընկալել «Վարչական իրավունքի» առարկայի կարևորությունը և նշանակությունը, բ) քննարկումներ և բանավեճեր անցկացնել վարչական իրավունքի կարգավորման առարկայի, դրա նորմերի գործնական իրականացման կառուցակարգերի և առաջադրվող այլ հարցերի շուրջ, գ) գնահատել վարչաիրավական հարաբերություններում առկա խնդիրները և տալ դրանց ճիշտ լուծումները, դ) վերլուծել ընդունված ակտերի իրավակիրառ պրակտիկան և կատարել համապատասխան առաջարկություններ, ե) տալ վարրական իրավախախտման հասկացությունը, վերլուծել դրա հատկանիշները, զ) կազմել վարչական իրավախախտումների վերաբերյալ նյութեր: է) բացահայտել վարչական իրավբախախտման բնութագրական հատկանիշները և իրավաբանական կազմը, տարբերակել վարչական իրավախախտումներ այլ իրավախախտումներից ը) տրված ելակետային տվյալների հիման վրա որոշել վարչական իրավախախտման տեսակը ,

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ		
Հիմնական		1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն 1995թ./փոփոխ. 2015թ./ 2. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրք 2007թ. 3. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի հանրապետության օրենսգիրք 1985թ. 4. <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենք, 2002 թ. 5. <<Ոստիկանության մասին>> ՀՀ օրենք, 2001 թ. 6. <<Հասարակական կազմակերպությունների մասին >> ՀՀ օրենք,2001 թ. 7. <<Կուսակցությունների մասին>> ՀՀ օրենք, 2002թ. 8. Հայաստանի հանրապետության վարչական դատավարության օրենսգիրք, 05.02.2013թ: ՀՀՊՏ 2013թ., 12..28/73/1013/.1 9. Իրավական ակտերի մասին Հայաստանի հանրապետության օրենք, 03.04.2002թ., ՀՀՊՏ 2002.05.21/15/190/: 10.<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենք. 2004թ. 11.<<Քաղաքացիության մասին>> ՀՀ օրենք. 2001թ 12. <<Օտարերկրացիների մասին>> ՀՀ օրենք. 2006թ 13. << Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացնող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> ՀՀ օրենք, 2008 14.Զինապարտության մասին Հայաստանի հանրապետության օրենք, 16.09.1998: ՀՀՊՏ 1998.10.16/26/59/: 15.Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին Հայաստռանի Հանրապետության օրենք, 03.04.2001թ, ՀՀՊՏ 2002.07.03./23/198/: 16.Լիցենզավորման մասին Հայաստանի հանրապետության օրենք, 30.05.2001թ.,ՀՀՊՏ 2001.08.08./26/158/: 17.Ազգային անվտանգության մարմինների մասին Հայաստանի Հանրապետության օրենք,28.12.2001: ՀՀՊՏ 2002.02..55/6/181/: 18.Արհեստակցական միությունների մասին Հայաստանի Հանրապետության օրենք, 05.12.2000թ.,ՀՀՊՏ 2001.01.15/1/133/:
		1. Գ.Դանիելյան «Վարչական պատասխանատվություն»:Ուսումնական

Լրացուցիչ		ձեռնարկ /Երևան:«Լույս» հրատարակչություն, 2002թ.-280 էջ/ 2. Գ.Դանիելյան «Վարչական վարույթ և դատավարություն»: Ուսումնական ձեռնարկ / Երևան:Տիգրան Մեծ, 2011թ. -384 էջ: 3. Գ.Իսրայելյան «ՀՀ վարչական իրավունք»: Դասախոսությունների և խնդիրների ժողովածու:/Երևան Աստղիկ գրատուն 2015թ. -147 էջ/ 4. Գ.Իսրայելյան «ՀՀ վարչական պատասխանատվություն և վարչական դիլիկտալոգիա»: /Երևան Աստղիկ գրատուն 2012թ. -120 էջ/ 5. Հարցեր և պատասխաններ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի վերաբերյալ, Երևան 2015, 363 էջ. 6. Ա.Լալայան. Վարչական հարկադրանքը և նրա տեսակները. Երևան, 1969. 7.Պետության և իրավունքի տեսություն: Ուսումնական ձեռնարկ / Պ507 Հեղ. խումբ; Գիտ. խմբ՝ Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան.-2 -րդ լրամշակված հրատ.-Եր.:Լուսաբաց հրատարակչատուն, 2016.- 628 էջ: 8.Մուրադյան Մ.Հ. Մարդու իրավունքների տեսության հիմնահարցեր/ Մ.Հ. Մուրադյան. – Եր., Մ992 Ա/Ձ Արման Ասմանգուլյան, 2016 (մաս 1) - 224 էջ: 9.Յու.Սուվարյան. Հանրային կառավարման տեսության ու պատմության ուրվագծեր. Երևան, 2004. 10.Административная ответственность:учеб. Пособие для студентов вузов,обучающихся по специальности 030501 <<Юриспруденция>> /А.И.Стахов и др; под ред. И.Ш.Килясханова, А.И.Стахова -3-е изд.,перераб. И доп. –М.:ЮНИТИ-ДАНА:Закон и право,2008г. -144 էջ 11.Барах Д.Н., Ренов Э.Н. Производство по делам об одминистративных правонарушениях /Пособие для слушателей народных унижерситетов/ -М.: Знание, 1989г.-96 էջ 12.Парыгин Н.П., Головко В.В. Исполнение административних наказаний:Учеббное пособие –М.: Изд.-во Эксмо, 2006г. 128 էջ 13.Сорокин В.Д. Административно- процессуальное право:Учебник 2-е изд.,перераб. И доп. /Подгот.докт.юрид.наук, проф. А.И.Каплуновым – СПБ.:Издательство Р.Асланова <<Юридический центр Пресс>>, 2008г.-571 էջ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ		Ստուգարք / ստոգված, չստուգված/ ամփոփիչ քննություն

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ		Ուսանողը դասընթացից կարող է հանդես բերել մինչև 100% (ստուգված՝ /ստուգարքից/, 20 միավոր՝ քննությունից) առաջադիմություն:Սովորողների գիտելիքները և հմտությունները գնահատվում են <<Գերազանց.>>. <<Լավ>>, <<Բավարար>>, և <<Անբավարար>>, կամ <<Ստուգված>> կամ<<Չստուգված>>: Սովորողների գիտելիքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝ ա) «Գերազանց», եթե ունկնդիրը խոր և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, սպառիչ, հաջորդական, գրագետ ու տրամաբանորեն կառուցված է շարադրում այն, նյութը սերտորեն կապում է ոստիկանության ծառայության խնդիրների հետ, չի դժվարանում պատասխանել, երբ ձևափոխվում է առաջադրանքը, ազատորեն լուծում է խնդիրներն ու կատարում գործնական առաջադրանքները, ճիշտ է հիմնավորում ընդունած որոշումները, ընդունակ է ինքնուրույն ընդհանրացնել և շարադրել նյութը՝ սխալներ թույլ չտալով. բ) «Լավ», եթե սովորողը հիմնավոր գիտի ծրագրային նյութը, գրագետ է և ըստ էության շարադրում է այն, հարցին պատասխանելիս թույլ չի տալիս էական անճշտություններ, կարողանում է ճիշտ կիրառել տեսական դրույթները, գործնական առաջադրանքները կատարելիս տիրապետում է անհրաժեշտ ունակությունների ու հմտությունների. գ) «Բավարար», եթե սովորողը յուրացրել է միայն հիմնական նյութը, բայց չգիտի դրա առանձին մանրամասները, թույլ է տալիս անճշտություններ, ոչ ճիշտ ձևակերպումներ, խախտում է ուսումնական նյութի շարադրման հաջորդականությունը և դժվարանում է կատարել գործնական առաջադրանքները. դ) «Անբավարար», եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ, չի կարողանում կատարել գործնական առաջադրանքներն ու լուծել խնդիրները
ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
		Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի ուսանողին:
Ներկայություն		Սովորողի դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկընդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն և գործնական աշխատանքների հանձնում: Ուսանողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը:
Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ		Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր:

Ինքնուրույն և գործնական աշխատանքներ		Ինքնուրույն և գործնական աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում: Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում ուսանողը պարտավոր է նշել աղբյուրը ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի:

ԱՌԱՐԿԱՅԻ ՏՐՈՀՄԱՆ ՔԱՐՏԵԶ

Թեմա 1 « **Պետական կառավարման բնութագիրը**» (4 **ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1.Կառավարման հասկացությունը: Սոցիալական կառավարման հասկացությունը, տեսակները: 2.Պետական կառավարման հասկացությունը, բնորոշ գծերը, պետական կառավարման փուլերը: 3.Գործադիր իշխանության հասկացությունը, գործադիր իշխանության և պետական կառավարման հարաբերակցությունը: 4.Պետական կառավարման գործառույթները: Հիմնական և օժանդակ գործառույթներ: 5.Պետական կառավարման սկզբունքները:	Հարցեր 1-5 – Ներկայացվում է դասախոսություն՝ սովորողների ուշադրությունը հրավիրելով առանցքային հարցերի վրա: Հարցեր 1-5 – ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը և առանձնացնում այն առարկաները, որոնք վերաբերվում են պետական կառավարման ոլորտին: Հարցեր 1-5 – անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են պետական կառավարման հասկացությունը, տեսակները, գործառույթները և սկզբունքները, քննարկում են ինքնուրույն աշխատանքի արդյունքները:

Թեմա 2 « **Վարչական իրավունքը հանրային իրավունքի համակարգում**: **Առարկան և մեթոդները** » (4 **ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. «Վարչական իրավունքը» որպես հանրային իրավունքի ճյուղ:	Հարցեր 1-4 - ներկայացվում է դասախոսություն՝ ուսանողների

2. Վարչական իրավունքի կարգավորման առարկան: 3. Վարչական իրավունքի կարգավորման մեթոդները: 4.Վարչական իրավունքի համակարգը:Վարչական իրավունքի կապն իրավունքի այլ ճյուղերի հետ:	ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: : Հարցեր 1-2 – ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը՝ տվյալ հարցերի վերաբերյալ ավելի խորը գիտելիքներ ձեռք բերելու համար և պատրաստվում են սեմինար պարապմունքի: Հարցեր 3-4 – ինքնուրույն աշխատանք սովորողները առանձնացնում են վարչական իրավունքի կարգավորման մեթոդները, ուսումնասիրում վարչական իրավունքի կապը պետության և իրավունքի տեսության, սահմանադրական իրավունքի, ֆինանսական իրավունքի, քրեական իրավունքի և իրավունքի այլ ճյուղերի հետ: Հարցեր 1-4– անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են վարչական իրավունքի հասկացությունը, կարգավորման առարկան, կարգավորման առարկայի մեջ մտնող պետական կառավարման ոլորտի իրավահարաբերությունները, կարգավորման մեթոդի հասկացությունը, վարչական իրավունքի համակարգի ընդհանուր մասի բաժինները, և հատոկ մասը, ներկայացնում վարչական իրավունքի կապը իրավունքի այլ ճյուղերի հետ:

Թեմա 3 « **Վարչական իրավունքի նորմերը և աղբույրները** » (4 **ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Վարչական իրավունքի աղբույրները: 2. Վարչական իրավունքի նորմի հասկացությունը և գործառույթները: 3.Վարչական իրավունքի նորմի կառուցվածքը՝ հիպոթեզ, դիսպոզիցիա, սանկցիա;	Հարցեր 1-5 – ներկայացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: Հարցեր 1-5 – ինքնուրույն աշխատանք.

4.Վարչական իրավունքի նորմերի դասակարգումը՝ ըստ իրավաբանական բովանդակության, ըստ արտահայտման ձևի, ըստ գործողության ժամկետի, ըստ ընդունող մարմնի իրավասությունների բնույթի և ծավալի, ըստ գործողության տարածքի, ըստ օրենսդրության բնույթի; 5. Վարչական իրավունքի նորմերի իրագործման հասկացությունը և եղանակները՝ կատարում, պահպանում, օգտագործում, կիրառում:	ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև քննարկվում են խնդրահարույց հարցերը, դասախոսին ներկայացնում են վարչաիրավական նորմերի կառոցվածքային առանձնահատկությունների հետ կապված վիճահարույց հարցեր և արտահայտում իրենց տեսակետներն ու մոտեցումները դրանց վերաբերյալ:: Հարցեր 1-5 –:– անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են վարչաիրավական նորմերի հասսկացությունը, աղբյուները, բնորոշ գծերը, դրանց կառոցվածքը, դասակարգումը ըստ իրավաբանական բովանդակության, արտահայտման ձևի, ժամկետի, ընդունող մարմնի իրավասությունների բնույթի և գործողության տարածքի: Վարչաիրավական նորմերի իրացման եղանակները:

Թեմա 4 **Վարչական իրավունքի սուբյեկտները** (6 **ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար**)	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Վարչական իրավունքի սուբյեկտի բնութագիրը և տեսակները; 2. Վարչական իրավունքի անհատական սուբյեկտները: 3. Ֆիզիկական անձինք որպես վարչական իրավունքի սուբյեկտներ:ՀՀ քաղաքացիների վարչաիրավական կարգավիճակը:Երկքաղաքացիների վարչաիրավական կարգավիճակը:Օտարերկրյա պետությունների քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց վարչաիրավական կարգավիճակը: 4. Պետական ծառայողի վարչաիրավական կարգավիճակը: 5.Վարչական իրավունքի կոլեկտիվ սուբյեկտները: Հասարակական միավորումների վարչաիրավական	Հարցեր 1-6 ներկայացվում է էդասախոսություն: Հարցեր 3 – ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ տվյալ հարցերի վերաբերյալ ավելի խորը գիտելիքներ ձեռք բերելու համար: Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները, կազմակերպվում քննարկումներ վարչական իրավունքի սուբյեկտի և վարչաիրավական հարաբերությունների սուբյեկտի սահմանզատման հարցի շուրջ::

կարգավիճակը: 6. Գործադիր իշխանության մարմինները որպես վարչական իրավունքի սուբյեկտներ:Գործադիր իշխանության բնութագիրը:Գործադիր իշխանության և պետական կառավարման հարաբերակցությունը: ՀՀ կառավարության ձևավորման կարգը, կառուցվածքը և լիազորությունները:Կառավարության քննարկմանը հարցեր ներկայացնելը:Հանրապետական գործադիր մարմիններ:	Հարցեր 1-6 –:– անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են վարչական իրավունքի սուբյեկտների հասկացությունը, անհատական և կոլեկտիվ սուբյեկտների իրավունակությունը և գործունակությունը, անհատական և կոլեկտիվ սուբյեկտների տեսակները և կարգավիճակը:

Թեմա 5 « **Պետական կառավարման ձևերը և մեթոդները** » (4 **ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1.Պետական կառավարման ձևի հասկացությունը: 2. Պետական կառավարման մեթոդի հասկացությունը: Մեթոդների տեսակները՝ ըստ գործառույթների / ընդհանուր և հատուկ մեթոդներ/, ըստ ներգործության բնույթի /ուղղակի կամ անուղղակի /: 3. Վարչական պայմանագիր 4. Համոզումը և հարկադրանքը պետական կառավարման բնագավառում: 5. Կառավարչական ակտի հասկացությունը և բնորոշ գծերը: Կառավարչական ակտին ներկայացվող պահանջները:	Հարցեր 1-5 ներկայացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: : Հարցեր 1-5 – ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները: 1-5 – սեմինար պարապմունք, Կատարվում է սովորողների գիտելիքների ստուգում հարցնման միջոցով:

Թեմա 6 « **Պետական կառավարման ոլորտների ընդհանուր բնութագիրը** » (4 **ժամ դասախոսություն, 2 ժամ գործնական**)	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**

1.Պետական կառավարման ոլորտները՝ արտաքին կապերի և հարաբերությունների, տնտեսական, սոցիալ-մշակութային, վարչաքաղաքական: 2..Պետական կառավարումը վարչաքաղաքական ոլորտում : 3. Հայաստանի կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությունը:	Հարցեր 1-3 - ներկայացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: Հարցեր 1-3 – ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ յուրացնում մատուցված նյութը: Հարցեր 1-3 – սեմինար պարապմունք, Կատարվում է սովորողների գիտելիքների ստուգում հարցնման միջոցով:

Թեմա 7 **Վարչարարության հիմունքներ** (4 ***ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար***, 2 ***ժամ գործնական***)	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1.Վարչարարության բնութագիրը: 2.Վարչարարության հիմնարար սկզբունքները: 3.Վարչարարության ձևերը: 4.Վարչարարության մեթոդները:Տնտեսական և վարչական մեթոդներ: 5.Վարչարարության օրինականության ապահովումը:	Հարցեր 1-5 - ներկայացվում է դասախոսություն : Հարցեր 4 - ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են անհրաժեշտ նյութերին, վեր են հանում խնդրահարույց հարցերը, որոնք քննարկվում են սեմինար պարապմունքի և հաջորդ դասախոսության ժամանակ: Հարցեր 1-5 - անցկացվում է սեմինար պարապմունք Ստուգվում են սովորողների գիտելիքները հարցման միջոցով:

Թեմա 8 **Վարչական վարույթ** (8 ***ժամ դասախոսություն***, 4 ***ժամ սեմինար,***)	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**

1. Վարչական վարույթի հասկացությունը և հատկանիշները:Վարչական վարույթի նպատակը, բովանդակությունը, մասնակիցները և օբյեկտը: 2.Վարչական վարույթի ժամկետները, ժամկետը երկարաձգելու հիմքերը և կարգը: 3.Բացարկը և ինքնաբացարկը վարչական վարույթում: 4.Վարչական վարույթի կասեցման և կարճման հիմքերը և կարգը: 5.Վարչական վարույթի փուլերը: Վարչական վարույթ հարուցելու հիմքերը և կարգը: 6.Վարչական վարույթի ընթացիկ փուլը:Գործի հանգամանքների պարզաբանմանն ուղղված գործողությունները: 7.Վարչական վարույթի եզրափակիչ փուլը:Վարչական ակտի հասկացությունը, հատկանիշները:Վարչական ակտի տեսակները:Վարչական ակտի ընդունման կարգը և ընդունման մասին իրազեկումը:Ակտի ուժի մեջ մտնելը:	Հարցեր 1-7 - անցկացվում է դասախոսություն Հարցեր 1-7 – ինքնուրույն աշխատանք: Ուսանողները նախօրոք ծանոթանում են հանձնարարված գրականությանը: Սովորողը նախապատրաստվում է սեմինարին դասախոսի նախապես հանձնարարված մասնագիտական գրականության համապատասխան նյութերը ուսումնասիրելով: Հարցեր 1-7 - անցկացվում է սեմինար պարապմունք (սեմինարը կարող է անցկացվել խմբային քննարկման միջոցով): Սովորողները ներկայացնում են վարչական վարույթի հասկացությունը, և հատկանիշները, փուլերը, վարչական ակտի տեսակները, դրանց ընդունման կարգը:

Թեմա 9 **Վարչական հարկադրանքի էությունը և տեսակները** (4 **ժամ դասախոսություն**, 2 **ժամ սեմինար**,)	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1.Վարչական հարկադրանքի հասկացությունը, հատկանիշները և տեսակնները: 2.Վարչական նախականխիչ միջոցների բնութագիրը և տեսակները: 3. Վարչական խափանիչ միջոցների բնութագիրը և տեսակները: 4. Վարչական տույժեր:	Հարցեր 1-6 - անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման եղանակով: : Հարցեր2- 6 – ինքնուրույն աշխատանք: ուսանողները ծանոթանում են անհրաժեշտ նյութերին, վեր են հանում խնդրահարույց հարցերը, որոնք քննարկվում են սեմինար պարապմունքի և հաջորդ դասախոսության ժամանակ: Հարցեր 1-6 – սեմինար պարապմունք. խնդրահարույց հարցերի քննարկում

	Հարցման միջոցով ստուգվում են ընթացիկ առաջադրանքները, կազմակերպվում են թեմատիկ ցուցադրություններ:

Թեմա 10 **Վարչական պատասխանատվություն** (6 **ժամ դասախոսություն**, 2 **ժամ սեմինար**)	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1.Վարչական պատասխանատվությունը որպես իրավաբանական պատասխանատվության ինքնուրույն տեսակ:Հասկացությունը և հատկանիշները: 2.Վարչական պատասխանատվության հարաբերակցությունն իրավաբանական պատասխանատվության այլ տեսակների հետ: 3. Վարչական պատասխանատվության նորմատիվ, փաստական և ընթացակարգային հիմքերը: 4. Առանձին սուբյեկտների վարչական պատասխանատվության առանձնահատկությունները: 5. Վարչական պատասխանատվությունը ծանրացնող և մեղմացնող հանգամանքները: 6. Վարչական պատասխանատվությունը բացառող հանգամանքները: 7. Վարչական պատասխանատվությունից ազատելը	Հարցեր 1-7 - անցկացվում է դասախոսություն : Հարցեր2- 6 – ինքնուրույն աշխատանք: ուսանողները ծանոթանում են անհրաժեշտ նյութերին, վեր են հանում խնդրահարույց հարցերը, որոնք քննարկվում են սեմինար պարապմունքի և հաջորդ դասախոսության ժամանակ: Հարցեր 1-4 – սեմինար պարապմունք. խնդրահարույց հարցերի քննարկում Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները, կազմակերպվում են թեմատիկ ցուցադրություններ: Հարցեր 5-7- գործնական պարապմունք: Դասախոսի կողմից տրված իրավիճակային խնդիրների լուծմամբ սովորողները հիմնավորում են անհրաժեշտ պաշտպանության և ծայրահեղ անհրաժեշտության իրավիճակներից բխող վարչական պատասխանատվությունը բացառող հանգամանքները:

Թեմա 11 **Վարչական իրավախախտում** (6 **ժամ դասախոսություն**, , 2 **ժամ սեմինար**)	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
`1. Վարչական իրավախախտման հասկացությունը և	Հարցեր 1-5 - անցկացվում է

հատկանիշները: 2. Վարչական իրավախախտման իրավաբանական կազմը: Զանցանքի պարտադիր և ֆակուլտատիվ հատկանիշները: 3. Վարչական իրավախախտման օբյեկտը և օբյեկտիվ կողմը: 4. Վարչական իրավախախտման սուբյեկտը և սուբյեկտիվ կողմը: 5. Վարչական իրավախախտումների բազմակիությունը:	դասախոսություն խմբային քննարկման եղանակով: :Հարցեր1-5 – ինքնուրույն աշխատանք: ուսանողները ծանոթանում են անհրաժեշտ նյութերին, վեր են հանում խնդրահարույց հարցերը, որոնք քննարկվում են սեմինար պարապմունքի և հաջորդ դասախոսության ժամանակ: Հարցեր 1-2- գործնական պարապմունք Դասախոսի կողմից տրված իրավիճակային խնդիրների լուծմամբ սովորողները տարբերակում են զանցանքի և հանցանքի իրաբանական կազմերը, հիմնավորում իրենց սեփական մոտեցումները:

Թեմա 12 **Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարույթ** (6 ***ժամ դասախոսություն***, , 2 ***ժամ գործնակն***)	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարույթի ընդհանուր բնութագիրը: 2. Վարչական իրավախախտմների վերաբերյալ գործերով ապացուցման ենթակա հանգամանքները: Ապացույցների տեսակները: 3. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթին մասնակցող անձինք: 4. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարույթն ապահովող միջոցները: Վարչական ձերբակալում, զննություն, իրերի և փաստաթղթերի վերցնելը: 5. Անձի բերումը: Բերման կարգը, հիմքերը, ժամկետները:	Հարցեր 1-5 - անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման եղանակով: Հարցեր1- 5 – ինքնուրույն աշխատանք: ուսանողները ծանոթանում են անհրաժեշտ նյութերին, վեր են հանում խնդրահարույց հարցերը, Հարցեր 4-5 գործնական պարապմունք Դասախոսի կողմից ներկայացված իրավիճակային խնդիրների հիման վրա սովորողները կազմում են վարչական իրավախախտման վերաբերյալ գործ., օրտագործելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարույթն ապահովող միջոցները :

Թեմա 14 **Հանցագործությունների և վարչական իրավախախտումների սահմանազատումը**: (8 **ժամ դասախոսություն**, 4 **ժամ սեմինար,** 2 **ժամ գործնական**)	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1.Հանցագործությունների և վարչական իրավախախտումների սահմանազատման նշանակությունը: 2.Բնակչության առողջության դեմ ոտնձգող հանցագործությունների և վարչական իրավախախտումների սահմանազատումը: 3.Սեփականության և տնտեսական գործունեության դեմ ոտնձգող հանցագործությունների և վարչական իրավախախտումների սահմանազատումը: 4.Ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման հարաբերությունների դեմ ոտնձգող հանցագործությունների և վարչական իրավախախտումների սահմանազատումը: 5.Կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգող հանցագործությունների և վարչական իրավախախտումների սահմանազատումը 6. Շրջակա միջավայրի պահպանության դեմ ոտնձգող հանցագործությունների և վարչական իրավախախտումների սահմանազատումը	Հարցեր 1-6 - անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման ձևով, որտեղ առանձնակի ուշադրություն է դարձվում ուսանողների կողմից ներկայացված խնդրահարույց հարցերին: Հարցեր 1-6 – ինքնուրույն աշխատանք: Ուսանողները նախօրոք ծանոթանում են հանձնարարված գրականությանը: Հարցեր 1- - անցկացվում է սեմինար պարապմունք (սեմինարը կարող է անցկացվել խմբային քննարկման միջոցով): Հարցեր 2-6 գործնական պարապմունք Դասախոսի կողմից տրված իրավիճակային խնդիրների լուծմամբ սովորողները տարբերակում են վարչական իրավախախտման և հանցագործության իրաբանական կազմերը, հիմնավորում իրենց սեփական մոտեցումները: